



Կարգապահական գործ թիվ 19241

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2020թ-ի հուլիսի 29-ի թիվ 90-րդ ԿԳ նիստի

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ԹԻՎ ԿԳ/70-Ա**

**ՓԱՍՏԱՔԱՆ ԵՐՎԱՆԴ ՎԱՐՈՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՀՀ փաստաբանների պալատի (**այսուհետ՝ նաև Պալատ**) խորհուրդը (**այսուհետ նաև՝ Խորհուրդ**), նիստը նախագահող՝ Խորհրդի անդամ Սեդրակ Ասատրյանի Խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Մելանյա Առուստամյանի, Սիմոն Բաբայանի, Գայանե Դեմիրջյանի և Տիգրան Խուրշուդյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մարիամ Պետրոսյանի,

քննության առնելով փաստաբան Երվանդ Վարոսյանի (արտոնագիր՝ թիվ 776), կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

«Վելես» իրավապաշտպան ՀԿ նախագահ Մարինա Պողոսյանը (**այսուհետ՝ նաև Դիմող**), դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ, հայտնել է, որ 11.10.2019թ. թիվ ԼԴ1/0027/01/18 քրեական գործով Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանում կայացած դատական նիստի ընթացքում փաստաբան Երվանդ Վարոսյանը (**այսուհետ՝ նաև Պատասխանող կամ Փաստաբան**) դրսևորել է ակնհայտ ագրեսիվ, փաստաբանին ոչ վայել վարքագիծ և անհարգալից վերաբերմունք է դրսևորել իր նկատմամբ՝ իրեն անվանելով «էշ»: Ինքը գտնվել է դատական նիստերի դահլիճում:

Դիմողը դիմումին կից ներկայացրել է թիվ ԼԴ1/0027/01/18 քրեական գործով կայացած դատական նիստի տեսաձայնագրությունը:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

Պալատի նախագահի 22.11.2019թ. թիվ 482-Ա/ԿԳ-19241 որոշմամբ փաստաբան Երվանդ Վարոսյանի նկատմամբ «Փաստաբանության մասին» օրենքի (**այսուհետ՝ նաև Օրենք**) 19-րդ հոդվածի 2-րդ կետի և Պալատի ընդհանուր ժողովի 11.12.2012թ. թիվ 1/4

որոշմամբ հաստատված նոր խմբագրությամբ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ՝ նաև Կանոնագիրք**) 2.2.3 ենթակետի (Պալատի ընդհանուր ժողովի 19.10.2019թ.-ի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ՝ նաև Նոր կանոնագիրք**) 2.2.2 ենթակետ) և 4.1 կետի (Նոր կանոնագրքի 4.1 կետ) պահանջների խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ (**այսուհետ՝ Հարուցման որոշում**):

Կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է փաստաբան Ռուբեն Բալոյանին (**այսուհետ՝ նաև Նախապատրաստող**):

3. Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.

3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.

Գործի նախապատրաստման ընթացքում Դիմողը բացատրություն չի ներկայացրել: 14.07.2020թ. Խորհրդի նիստին Դիմողը հայտնել է հետևյալը.

11.10.2019թ. թիվ ԼԴ1/0027/01/18 քրեական գործով Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանում կայացած դատական նիստի ընթացքում Դիմողը հիշել է Պատասխանողի պաշտպանյալներից մեկին և արտաբերել է «Վստրեչի Ապեր» մականունը, որից հետո Պատասխանողը հարձակվել է իր վրա, իր հետ «դու»-ով խոսել, ինչից հետո Դիմողը պահանջել է Պատասխանողից կոռեկտ խոսել, ապա Պատասխանողը Դիմողի հասցեին արել է «ա՛յ է՛շ» արտահայտությունը:

29.07.2020թ. կայացած Խորհրդի նիստում Դիմողը Պատասխանող կողմին մեղադրել է նրանում, որ վկաները չեն լսվել, և նշել է, որ ամեն ինչ չի արվել, որպեսզի վկաների մասնակցությունը կարգապահական գործին ապահովվի:

Դիմողը պնդել է, որ հնարավոր չէ, որ տեխնիկական պատճառներով վկաների չներգրավվելու հիմքով նրանց նախկինում տրված ցուցմունքներն անթույլատրելի համարվեն, ինչպես նաև հավելել է, որ նաև առանց վկաների հնարավոր է ճիշտ եզրահանգման հանգել, քանի որ տեսանյութից ամեն ինչ պարզ է:

3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.

Օրենքի 39.3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Պատասխանող Երվանդ Վարոյանից դիմումի վերաբերյալ պահանջվել է գրավոր բացատրություն:

05.11.2019թ. Պալատում մուտքագրվել է Պատասխանողի բացատրությունը, որում հայտնվել է հետևյալը.

Պատասխանողը հերքել է, որ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանում 11.10.2019թ. կայացած դատական նիստից հետո Դիմողի հասցեին օգտագործել է «է՛շ» բառը: Փաստաբանը հայտնել է, որ նշյալ նիստից հետո Դիմողն իր հասցեին ինչ-որ արտահայտություններ է կատարել, ինչին Պատասխանողը պատասխանել է «դու վաբշե սուս» կամ նման արտահայտությամբ (Փաստաբանն իր կողմից արտաբերված կոնկրետ արտահայտությունը չի հիշել), իսկ Դիմողի կողմից իր հետ «դուք» -ով խոսելու հորդորին, իր հիշելով, պատասխանել է, որ «դու»-ով է խոսելու:

Ըստ Փաստաբանի՝ նշված խոսակցությունը տեղի է ունեցել դատական նիստերի դահլիճում, որից հետո Պատասխանողը դահլիճից դուրս է եկել:

Փաստաբանը հայտնել է, որ իր կողմից դատական նիստերի դահլիճից դուրս գալուց հետո կամ դրան զուգահեռ տեսանյութում լսվում է «էշ» բառին նմանվող մի արտահայտություն, որը, ըստ Պատասխանողի, անհասկանալի է՝ իր ծայնն է, թե մեկ ուրիշի: Պատասխանողը պնդել է, որ անգամ, եթե «էշ» բառն ինքն է օգտագործել, ապա ինքը, առհասարակ, այդ բառը որպես վիրավորանք չի օգտագործում, այլ «էշի տեղ են դնում...» կամ նման արտահայտություններ կատարելու համար:

Պատասխանողը չի բացատրել և ենթադրել է, որ նշյալ օրը դատական նիստում ստեղծված իրավիճակի հետևանքով դատական նիստերի դահլիճից դուրս գալիս կատարել է «էշի տեղ են դնում մարդկանց» արտահայտությունը, և առաջին բառից հետո ձայնագրության մեջ չի լսվում արտահայտության մնացյալ մասը, որը հնչել է դատարանի միջանցքում:

Գործի նախապատրաստման ընթացքում Պատասխանողի կողմից բացատրություն չի ներկայացվել:

Պատասխանողը Խորհրդի նիստին չի ներկայացել, թեև պատշաճ տեղեկացվել էր նիստի ժամանակի և վայրի մասին:

14.07.2020թ. կայացած Խորհրդի նիստին ներկայացել է Պատասխանողի ներկայացուցիչը, ով միջնորդություն է ներկայացրել հնարավորություն տալ իրեն հակընդդեմ հարցման ենթարկել երկու վկաներին, ում հարցման է ենթարկել Նախապատրաստողն այն մասին, թե արդյոք Պատասխանողի կողմից հնչեցվել է «այ էշ» արտահայտությունը, և եթե այո՝, ապա ում հասցեին է այն հնչեցվել: Խորհրդի կողմից միջնորդությունը բավարարվել է, և վկաների ներգրավումն ապահովելու նպատակով Խորհրդի նիստը հետաձգվել է:

28.07.2020թ. կայացած Խորհրդի նիստում վկաները չեն լսվել, քանի որ նրանցից մեկը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի նիստի ժամանակի և վայրի մասին, Խորհրդի նիստին չէր ներկայացել, իսկ մյուս վկան Խորհրդի նիստի ժամանակի և վայրի մասին պատշաճ չէր ծանուցվել:

Խորհրդի նիստին ներկայացած Պատասխանողի ներկայացուցիչը վկաներին հակընդդեմ հարցման ենթարկելու իր միջնորդությունը պնդել է, և վկաների ներգրավումն ապահովելու նպատակով Խորհրդի նիստը հետաձգվել է:

29.07.2020թ. կայացած Խորհրդի նիստին Դիմողն առարկել է վկաների ներկայությունը Խորհրդի նիստին չապահովվելու վերաբերյալ:

Պատասխանողի ներկայացուցիչը Խորհրդին խնդրել է, որ այն դեպքում, երբ առկա չէ հնարավորություն վկաներին ենթարկել հակընդդեմ հարցման, վկաների ցուցմունքները համարել անթույլատրելի և չհետազոտել:

Պատասխանողի ներկայացուցիչը նաև հայտնել է հետևյալը.

Պատասխանողի նկատմամբ գործում է անմեղության կանխավարկածի սկզբունքը, որը պետք է կիրառվի գործի հետևյալ 3 դրվագով՝ արդյո՞ք հնչել է արտահայտությունը, որի կատարումը վերագրվում է Պատասխանողին, եթե քննարկվող արտահայտությունը հնչել է, արդյո՞ք այն հնչեցվել է Պատասխանողի կողմից, եթե

քննարկվող արտահայտությունը կատարվել է Պատասխանողի կողմից, արդյո՞ք այն ուղղված է եղել Դիմողին:

1-ին դրվագի մասով Պատասխանողի ներկայացուցիչը հայտնել է, որ առկա է հիմնավոր կասկած առ այն, որ Պատասխանողի կողմից չի հնչեցվել այն արտահայտությունը, որի կատարումը վերագրվել է իրեն: 2-րդ դրվագի մասով ևս, ըստ Պատասխանողի ներկայացուցչի, կա հիմնավոր կասկած, որ քննարկվող արտահայտությունը Պատասխանողի կողմից չի հնչեցվել: 3-րդ դրվագով Պատասխանողի ներկայացուցչի կարծիքով, անգամ եթե Պատասխանողի կողմից հնչեցվել է այն արտահայտությունը, որի կատարումը վերագրվել է իրեն, հիմնավոր կասկած կա, որ այդ արտահայտությունը Դիմողին ուղղված չի եղել:

Պատասխանողի ներկայացուցիչը նաև նշել է, որ Պատասխանողը չի ընդունել, որ նման արտահայտություն է կատարել, կամ այդ արտահայտությունն ուղղված է եղել Դիմողին, և նման պայմաններում ինքը չի պատկերացնում, թե ինչպես պետք է հաղթահարվի Պատասխանողի անմեղության կանխավարկածը:

Ըստ Պատասխանողի՝ կարգապահական գործում առկա տեսանյութից երևում է, որ Պատասխանողը նախքան քննարկվող արտահայտությունները ենթադրյալ հնչելու պահը, դուրս էր գալիս դատական նիստերի դահլիճից և վերադառնալով դատական նիստերի դահլիճ՝ Դիմողի հետ երկխոսությունը չի շարունակել և ընդհանրական գնահատական է հնչեցրել դատական նիստերի դահլիճում տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ:

Պատասխանողի ներկայացուցիչը կարծիք է հայտնել, որ հնարավոր է՝ Պատասխանողը օգտագործել է, ոչ թե «այ՛ էջ», այլ դրան հնչյունաբանորեն նման «հավերժ» կամ այլ բառ:

3.3. Վկաների ցուցումները.

Նախապատրաստողի կողմից 16.01.2020թ. գրավոր հարցման են ենթարկվել սույն կարգապահական գործով վկաներ Արման Վեգիրյանը և Ելենա Ադամյանը:

Ելենա Ադամյանը հայտնել է, որ ներկա է եղել 11.10.2019թ. թիվ ԼԴ1/0027/01/18 քրեական գործով Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանում կայացած դատական նիստին և տեսանկարահանել է այն: Դատական նիստի ընդմիջման ժամանակ վիճաբանություն է սկսվել Դիմողի և Պատասխանողի միջև, որի ընթացքում Պատասխանողը, դիմելով Դիմողին, ասել է հետևյալը. «Խոսում եմ, «դու»-ով էլ կխոսամ, այ՛ էջ»: Դրանից հետո Պատասխանողը դուրս է եկել դատական նիստերի դահլիճից: Ելենա Ադամյանն ընդգծել է, որ վստահ է, որ նշյալ արտահայտությունն արվել է Պատասխանողի կողմից, քանի որ Պատասխանողը եղել է իր տեսադաշտում, և արվել է՝ ի պատասխան Դիմողի՝ Պատասխանողին ուղղված հետևյալ արտահայտության. «Դու-ով չխոսա՛ս հետս», որից հետո Պատասխանողը դուրս է եկել դատական նիստերի դահլիճից:

Արման Վեգիրյանը հայտնել է, որ 11.10.2019թ. որպես դիտորդ ներկա է եղել թիվ ԼԴ1/0027/01/18 քրեական գործով Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանում կայացած դատական նիստին և նկարահանել է այն: Դատական նիստի ընթացքում վիճաբանություն է եղել Դիմողի և Պատասխանողի միջև: Այդ պահին Արման

Վեզիրյանը կանգնած էր դատական նիստերի դահլիճում՝ Դիմողից և Պատասխանողից մոտ 3 մետր հեռավորության վրա՝ նրանցից ձախ: Դիմողը Պատասխանողից պահանջել է իր հետ «դու»-ով չխոսել, իսկ Պատասխանողը պատասխանել է. «Խոսում եմ, դու-ով էլ կխոսեմ, ա՛յ էջ»: Նշված խոսքերն ասելով՝ Պատասխանողը դուրս է եկել դատական նիստերի դահլիճից: Ըստ Արման Վեզիրյանի՝ Պատասխանողի կողմից արված նշյալ բառերը շարունակական էին, իսկ «ա՛յ էջ» ասելուց հետո Պատասխանողն արդեն գտնվում էր դատարանի դահլիճից դուրս՝ դահլիճի մուտքի մոտ: Արման Վեզիրյանը նաև հայտնել է, որ վստահ է, որ Պատասխանողն է արել «ա՛յ էջ» արտահայտությունը, քանի որ այն արտաբերելիս գտնվել է իր տեսադաշտում: Արման Վեզիրյանը հայտնել է նաև, որ «Խոսում եմ, դու-ով էլ կխոսեմ, ա՛յ էջ» արտահայտությունը Պատասխանողի ասելու ժամանակ դատական նիստն ընդմիջված էր:

4. Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.

Կարգապահական գործի նախապատրաստման արդյունքում Նախապատրաստողը 27.01.2020թ. կազմել է եզրակացություն:

Նախապատրաստողի եզրակացության վերաբերյալ կողմերն առարկություններ չեն ներկայացրել:

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի (**այսուհետ նաև՝ Կարգ**) 3.10.3 ենթակետի համաձայն՝ *խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստը.

- Երվանդ Վարոսյանը 11.10.2019 թվականին թիվ ԼԴ1/0027/01/18 քրեական գործով Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանում կայացած դատական նիստի ընդմիջմանը վիճաբանել է Դիմող Մարինա Պողոսյանի հետ և դուրս է եկել դահլիճից, որից հետո լսվել է որոշակի արտահայտություն, որի հեղինակը, բովանդակությունն ու հասցեատերը չեն պարզվել:

- Դիմող Մարինա Պողոսյանը թիվ ԼԴ1/0027/01/18 քրեական գործով դատավարության մասնակից չի հանդիսացել: Սույն փաստը հաստատվում է Դատալեքս տեղեկատվական համակարգում ԼԴ1/0027/01/18 քրեական գործի վերաբերյալ առկա տեղեկություններով:

6. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Երվանդ Վարոսյանը փաստաբան է հանդիսանում 19.10.2007թ.:

2015-2020թթ. ընկած ժամանակահատվածում Երվանդ Վարոսյանի նկատմամբ 9 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ, որոնցից 3-ը կարճվել են:

Պալատի խորհրդի 09.10.2015թ. թիվ ԿԳ/145-Ա որոշմամբ Կանոնագրքի 2.2.3 ենթակետի և 5.2.1 ենթակետի 1-ին պարբերության պահանջների խախտման համար Երվանդ Վարոսյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության և նրա նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն և լրացուցիչ կարգապահական տույժ՝ իր հաշվին 6 ամսվա ընթացքում լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցություն՝ «Դեոնթոլոգիա» թեմայով 8 (ութ) ակադեմիական ժամ ժամաքանակով (**հիմնական տույժը մարված է. լրացուցիչ տույժը մարված չէ**):

Պալատի խորհրդի 17.12.2015թ. թիվ ԿԳ/214-Ա որոշմամբ Կանոնագրքի 2.2.3 ենթակետի պահանջների խախտման համար Երվանդ Վարոսյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության, և նրա նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն (**տույժը մարված է**):

Պալատի խորհրդի 22.08.2017թ. թիվ ԿԳ/74-Ա որոշմամբ Կանոնագրքի 4.1 կետի պահանջների խախտման համար Երվանդ Վարոսյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության, և նրա նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն և լրացուցիչ կարգապահական տույժ՝ իր հաշվին 6 ամսվա ընթացքում լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցություն՝ «Դեոնթոլոգիա» թեմայով 8 (ութ) ակադեմիական ժամ ժամաքանակով (**հիմնական տույժը մարված է. լրացուցիչ տույժը մարված չէ**):

Պալատի խորհրդի 25.01.2018թ. թիվ ԿԳ/07-Ա որոշմամբ Կանոնագրքի 4.1 կետի պահանջների խախտման համար Երվանդ Վարոսյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության, և նրա նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ նկատողություն (**տույժը մարված է**):

Պալատի խորհրդի 07.07.2018թ. թիվ ԿԳ/117-Ա որոշմամբ Երվանդ Վարոսյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության, և նրա նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ տուգանք 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամի չափով՝ պարտադիր վերապատրաստման դասընթացներին մասնակցելու պարտականությունը չկատարելու համար (**որոշումը բողոքարկվել է դատական կարգով**):

Պալատի խորհրդի 06.02.2019թ. թիվ ԿԳ/10-Ա որոշմամբ Երվանդ Վարոսյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության, և նրա նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ նկատողություն՝ պարտադիր վերապատրաստման դասընթացներին մասնակցելու պարտականությունը չկատարելու համար (**որոշումը բողոքարկվել է դատական կարգով**):

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, գտնում է, որ փաստաբան Երվանդ Վարոսյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ:

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:

Կարգապահական վարույթ հարուցելու որոշմամբ նախատեսվում են վարույթի սահմանները: Նույն որոշմամբ քննարկման ենթակա են համարվել հետևյալ հարցերը՝

- արդյո՞ք փաստաբան Երվանդ Վարոսյանը «Վելես» իրավապաշտպան ՀԿ նախագահ Մարինա Պողոսյանին անվանել է «էշ».
- արդյո՞ք «Վելես» իրավապաշտպան ՀԿ նախագահ Մարինա Պողոսյանը թիվ ԼԴ1/0027/01/18 քրեական գործով հանդիսանում է դատավարության մասնակից՝ Կանոնագրքի 4.1 կետի կիրառման սահմանները պարզելու տեսակետից:

Ա. փաստաբան Երվանդ Վարոսյանի կողմից «Վելես» իրավապաշտպան ՀԿ նախագահ Մարինա Պողոսյանին «էշ» անվանելու և դրանով իսկ Կանոնագրքի 2.2.3 ենթակետով սահմանված կանոնի խախտում թույլ տալու վարքագծի մասով.

Կանոնագրքի 2.2.3 ենթակետի համաձայն՝ մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական և այլ բնագավառներում իր գործունեությամբ փաստաբանը պետք է նպաստի փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը:

Կարգի 3.3.1 ենթակետի համաձայն՝ կողմերից յուրաքանչյուրը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

Կարգի 3.3.5 ենթակետի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

Սույն պարագայում Դիմողը Պատասխանողին վերագրում է 11.10.2019թ. թիվ ԼԴ1/0027/01/18 քրեական գործով Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանում կայացած դատական նիստին իր հասցեին «այ՛ էշ» արտահայտության կատարումը: Որպես իր պնդման ապացույց Դիմողը ներկայացրել է թիվ ԼԴ1/0027/01/18 քրեական գործով կայացած դատական նիստի տեսաձայնագրությունը: Վերջինիս հետազոտությունից հետևում է, որ Պատասխանողը բանավիճել է Դիմողի հետ, որից հետո դուրս է եկել դատական նիստերի դահլիճից, որից անմիջապես հետո հնչել է որոշակի արտահայտություն, որի բովանդակությունն ու հասցեատերը հստակ չեն, պարզ չէ նաև՝ արդյո՞ք արտահայտությունը կատարում է Պատասխանողը, թե՛ ոչ:

Նախապատրաստողի կողմից գրավոր հարցման ենթարկված երկու վկաները ցուցմունք են տվել այն մասին, որ լսել և տեսել են, որ Պատասխանողը Դիմողի հասցեին

կատարել է «այ էջ» արտահայտությունը:

Պատասխանողի ներկայացուցիչ փաստաբան Ռուբեն Մելիքյանը միջնորդել է հրավիրել նշված վկաներին կարգապահական գործով հարցաքննելու համար:

Վկաների մասնակցությունը Խորհրդի նիստին ապահովել չի հաջողվել՝ չնայած Խորհրդի կողմից ողջամտորեն ձեռնարկված անհրաժեշտ և բավարար միջոցներին:

Նման պայմաններում, երբ Պատասխանող կողմը հնարավորություն չի ունեցել հարցեր ուղղել վկաներին (երբ միջնորդել էր վկաներին հարցաքննել և խորհուրդը բավարարել էր այն), ինչով պայմանավորված նշյալ ցուցմունքները գնահատելիս խորհրդի մոտ արժանահավատության հարցում կասկած է առաջացել:

Սույն գործում առկա չեն այլ թույլատրելի, վերաբերելի, բավարար չափով որոշակի և արժանահավատ ապացույցներ Փաստաբանի կողմից Դիմողին «էջ» անվանելու վերաբերյալ:

Գործում առկա տեսագրությունից իհարկե բխում է, որ «այ էջ» արտահայտությունը կատարվել է տղամարդու ձայն ունեցող անձի կողմից, սակայն առկա չէ այդ արտահայտությունը կատարած անձի պատկերը, ինչով պայմանավորված էլ հնարավոր չէ միայն ձայնով որոշել, որ այդ արտահայտությունը կատարվել է հենց Երվանդ Վարոսյանի կողմից: Բացի այդ, արտահայտությունը կատարվել է տեսախցիկի նկարահանման տարածքից դուրս, ինչից բխում է, որ հնարավոր չէ նաև որոշել, թե ով է «այ էջ» արտահայտության հասցեատերը և վերջապես ուղղված է արդյոք այդ արտահայտությունը որևէ անձի, թե՛ ոչ:

Վերոգրյալը հաշվի առնելով և նկատի ունենալով այն հանգամանքը, որ Փաստաբանի կողմից Դիմողին «էջ» անվանելու փաստի վերաբերյալ առկա են միայն վկաների ցուցմունքներ, ում Պատասխանող կողմը հարցեր տալու հնարավորություն չի ունեցել, Խորհուրդը գտնում է, որ վերը նշված փաստն առանց կասկածի հնարավոր չէ հաստատված համարել:

Կարգի 7.2.6 ենթակետի համաձայն՝ *Կարգապահական խախտման փաստը ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարատվել Օրենքի և սույն կարգի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգ շրջանակում, մեկնաբանվում են հոգուր Պատասխանողի:*

Նշյալ մոտեցումը համահունչ է նաև ՀՀ սահմանադրական դատարանի (**այսուհետ՝ նաև ՍԴ**) և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (**այսուհետ՝ նաև ՄԻԵԴ**) նախադեպային իրավունքին:

Մասնավորապես 09.06.2015թ. թիվ ՍԴՈ-1213, 28.12.2010թ. թիվ ՍԴՈ-931 և 23.06.2016թ. ՍԴՈ-1289 որոշումներում ՍԴ-ն անդրադարձել մրցակցության և կողմերի հավասարության ինստիտուտին:

ՍԴ-ն գտել է, որ վարույթի յուրաքանչյուր կողմին պետք է տրամադրվի ողջամիտ հնարավորություն՝ ներկայացնելու իր փաստարկները, ներառյալ՝ ապացույցներն այնպիսի պայմաններում, որոնք նրան մյուս կողմի համեմատ չեն դնում էականորեն անբարենպաստ վիճակում:

Իր վարույթում գտնվող մի շարք գործերով համանման դիրքորոշում է արտահայտել նաև ՄԻԵԴ-ը (Dombo Beheer v Netherlands, Judgement, 22.09.1993, Rowe and Davis v the United Kingdom, Judgement 16.02.2000, Nikoghosyan and Melkonyan v

Armenia, Judgment 06.12.2007, Steck-Risch v Liekhtenstein, Judgment, 19.05.2005 և այլն):

Ավելին՝ ՄԻԵԴ-ն ուղղակիորեն պարտադիր է համարել վարույթի կողմերին վկաներին հավասար պայմաններում հարցաքննելու իրավունքի ապահովումը (T.K. v Lithuania, Judgment, 12.06.2018, Schatschaschwili v. Germany, Grand Chamber, Judgment, 15.12.2015 և այլն): ՄԻԵԴ-ը գտել է, որ որպես կանոն վկաները պետք է հարցաքննվեն հրապարակային նիստում, և գրավոր ցուցմունքները պետք է դիտարկվեն միայն վկաների բացակայության բավարար հիմքերի առկայությունը պարզելուց հետո: Ընդ որում, եթե վկաների գրավոր ցուցմունքները հանդիսանում են անձի մեղքն ապացուցող միակ բավարար չափով վստահելի ապացույց, ապա դրանք վարույթն իրականացնող մարմնի կողմից պետք է հետազոտվեն հատուկ մանրակրկտությամբ (Al-Lhawaja and Tahery v. the United Kingdom Grand Chamber, Judgment, 15.12.2011):

Վերոնշյալի հաշվառմամբ՝ Խորհուրդը գտնում է, որ սույն կարգապահական վարույթում ներգրավված վկաների գրավոր ցուցմունքները պետք է հետազոտվեն առանձնահատուկ խստապահանջությամբ, քանի որ վերջիններս Դիմողի կողմից Պատասխանողին վերագրվող վարքագիծն առերևույթ հաստատող միակ ապացույցներն են: Խորհուրդը հաշվի է առնում նաև, որ Պատասխանող կողմը հնարավորություն չի ունեցել հարցաքննել վկաներին: Ըստ էության, վկաներին հարցաքննելու հնարավորություն չի ունեցել նաև Դիմողը:

Վկաներին գրավոր հարցման է ենթարկել Նախապատրաստողը, սակայն քանի որ վկաների ցուցմունքները Դիմողի օգտին են, առանձնահատուկ կարևորություն պետք է տրվի Պատասխանողի կամ նրա ներկայացուցչի կողմից վկաներին հարցաքննելու հնարավորություն չունենալու հանգամանքին՝ ելնելով նրանից, որ ստեղծված պայմաններում Պատասխանողի շահերը գտնվում են Դիմողի շահերի համեմատությամբ նվազ պաշտպանված վիճակում:

Ըստ այդմ, միայն վկաների ցուցմունքներով, այն պայմաններում, երբ գործի նյութերում առկա տեսանյութը բավարար պատկերացում չի տալիս Պատասխանողի վարքագծի վերաբերյալ, Պատասխանողին Դիմողի կողմից վերագրվող վարքագիծը չի կարող հաստատված համարվել:

Դիմողը չի ներկայացրել որևէ այլ ապացույց, որը կվկայեր Պատասխանողի կողմից իր հասցեին վերոնշյալ արտահայտության կատարումը, հետևաբար Դիմողը՝ որպես Պատասխանողի ենթադրյալ ոչ իրավաչափ վարքագիծն ապացուցելու պարտականություն ունեցող կողմ, պետք է կրի հավելյալ ապացույց չներկայացնելու բացասական հետևանքը, իսկ չփարատված կասկածները պետք է որակվեն ի շահ Պատասխանողի:

Խորհուրդը հաշվի է առնում նաև այն հանգամանքը, որ Պատասխանողի ներկայացուցչի միջնորդության հիման վրա Խորհուրդը հետաձգել է 14.07.2020թ. նշանակված կարգապահական նիստը՝ վկաներին հրավիրելու նպատակով:

Վկաները չնայած ծանուցված լինելու հանգամանքին չեն ներկայացել 28.07.2020թ. նշանակված կարգապահական նիստին, որը նույն պատճառաբանությամբ հետաձգվել է և նշանակվել 29.07.2020թ-ին:

Վկաները ևս մեկ անգամ տեղեկացվել են կարգապահական նիստի մասին իրենց

տրամադրած հեռախոսահամարին համապատասխան հաղորդագրություն ուղարկվելու միջոցով և նորից չեն ներկայացել 29.07.2020թ. նշանակված կարգապահական նիստին:

Խորհուրդը նաև ի գիտություն է ընդունում, որ վկաներից մեկը Ելենա Ադամյանը հանդիսացել է Դիմողի աշխատողը, Դիմողը ներկայացել է 29.07.2020թ. նշանակված նիստին և հայտարարել է, որ ինքը պարտավոր չէր ապահովել վկայի ներկայությունը:

Վերոնշյալը հիմք ընդունելով Պատասխանողի վարքագծում Կանոնագրքի 2.2.3 ենթակետի խախտումը չի հաստատվել:

ԼԴ1/0027/01/18 քրեական գործով դատավարության մասնակից հանդիսանալու և դրանով պայմանավորված Կանոնագրքի 4.1 կետի կիրառելիության մասով.

Կանոնագրքի 4.1 ենթակետի համաձայն՝ *փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև, պետք է ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին, այդ թվում հարգանքով վերաբերվել դատավորին և դատավարության մյուս մասնակիցներին: Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի կամ արբիտրի գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Փաստաբանը դատարանի հանդեպ ճշգրիտ հարգանք և համակրանք դրսևորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը կամ ցանկացած հետևանքները, որոնք կպատահեն իր կամ ցանկացած այլ անձի հետ:*

Կանոնագրքի 4.1 կետից հետևում է, որ, որ Կանոնագրքի նշյալ կետի խախտման համար մեղավոր ճանաչվելու համար ենթադրյալ իրավախախտումը պետք է տեղի ունենա դատավարական գործողություն կատարելիս:

Դատարանի կողմից կիրառվող վարվելակերպի կանոնները գործում են դատավարական գործողություններ կատարելիս, իսկ սույն կետի համատեքստում Փաստաբանը պարտավոր է, այդ թվում հարգանքով վերաբերվել դատավորին և դատավարության մյուս մասնակիցներին:

Գործում առկա տեսագրությունից բխում է, որ Փաստաբանի կողմից դատարանի նիստերի դահլիճից դուրս գալուն զուգահեռ արդեն իսկ դատավարական գործողություն չէր կատարվում, ուստի անկախ այն հանգամանքից, թե ինչ վարքագիծ է փաստաբանը դրսևորել դատարանի միջանցքում, չի կարող դիտարկվել Կանոնագրքի 4.1 կետի խախտում:

Բացի այդ, Դատալեքս տեղեկատվական համակարգում առկա տեղեկությունների համաձայն Դիմողը չի հանդիսացել ԼԴ1/0027/01/18 քրեական գործով դատավարության մասնակից, ուստի Փաստաբանի և Դիմողի հարաբերությունները ներառված չեն Կանոնագրքի 4.1 կետով սահմանված կանոնի կարգավորման շրջանակներում:

Վերոնշյալը հաշվի առնելով Պատասխանողի վարքագծում Կանոնագրքի 4.1 կետի խախտման հատկանիշները բացակայում են:

Կանոնագրքի 2.2.2 ենթակետի և 4.1 կետի պահանջը խախտած լինելու փաստը չհաստատվելու դեպքում չի կարող հաստատված համարվել նաև Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի խախտման փաստը, քանի որ վերջինս փաստաբանի վրա դրել է Կանոնագրքի պահանջները պահպանելու և կատարելու պարտականություն, որը համարվում է խախտված, երբ հաստատվում է փաստաբանի կողմից Կանոնագրքի որևէ դրույթի խախտման փաստը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7- րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, Կարգի 7.2.5 (2) ենթակետի և Պալատի կանոնադրության 16.26-րդ կետի պահանջներով՝
Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 22.11.2019թ. թիվ 482-Ա/ԿԳ-19241 որոշմամբ փաստաբան Երվանդ Վարոսյանի (արտոնագիր՝ թիվ 776) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

**ՀՀ փաստաբանների պալատի
խորհրդի նիստը նախագահող՝**

Սեդրակ Ասատրյան

**29 հուլիսի 2020թ.
թիվ ԿԳ/70-Ա
ք.Երևան**